



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«31» 08 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0154-23

Ձեռնարկողը՝

«Ալափմեյր» ՓԲԸ

Կոփայքի մարզ, գ. Ալափարս, Չարենցավանի խճ.1

Գործունեությունը՝

Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեքվություն

Կոփայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 10 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0154-23
«31» Օգոստոսի 2023թ.

Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Պատվիրատու՝	«Ալափմետ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, Ալափարս բնակավայր

Համաձայն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության/այսուհետ՝ հաշվետվություն/ «Ալափմետ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսում է Չարենցավան համայնքի, Ալափարս բնակավայրում՝ ընկերությանը պատկանող, սեփականաշնորհված տարածքում իրականացնել գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք, ՀՕ-110-Ն/ 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 5-րդ կետի բ) ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ալափարս բնակավայրում, Չարենցավանի խճուղի, 1-ին փակուղի 8 հասցեում, գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքի գործարանի տարածքում:

Ընկերությունն իր տարածքում իրականացնում է մոլիբդենի խտանյութի վերամշակում՝ թրծում և ֆերոհամաձուլվածքների ստացում:

2013թ ընկերությունը 2000-2400տ/տարեկան արտադրողականությամբ ֆերոհամաձուլվածքների արտադրության գործարան հիմնելու համար ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացություն, այնուհետև արտադրական շրջան ընդլայնելու նպատակով ընկերությունը՝ գործարանի տարածքում մոլիբդենի խտանյութի թրծման հոսքագծի տեղադրման և ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման աշխատանքային նախագծի վերաբերյալ 2014 թվականին ստացել է ԲՓ-28 փորձաքննական դրական եզրակացություն: Համաձայն հաշվետվության 2014 թվականի կեսից ընկերությունն իրականացրել է սարքավորումների մոնտաժման, կարգաբերման և շահագործման աշխատանքներ, սակայն հումքի բացակայության



[illegible]

վառարանը՝ ԵՄ-1200-ը, նախատեսված է մոլիբդենի խտանյութի թրծման համար: Ձոնաների տաքացումը իրականացվում է էլեկտրական եղանակով: Թրծած մոլիբդենի խտանյութն իրենից ներկայացնում է մոլիբդենի եռօքսիդ, որը հետագայում օգտագործում են ֆերոմոլիբդեն ստանալու համար:

Համաձայն նախագծի վառարանի տեխնիկական պարամետրերն են՝

- էլեկտրական հզորություն- 360 կվտ,
- Ձոնաների թիվ - 5,
- Ջերմաստիճան- 6500C,
- Վառարանի երկարություն- 16մ,
- Խողովակի տրամագիծը- 1200մմ,
- Արտադրողականությունը ըստ MoS2-ի- 3-5տ/օր,
- Ջերմաստիճանի կարգավորումը- $\pm 100C$,
- Ծխաքարչի տիպը DH-10-20000մ³/ժ,
- Ծխնելույզի բարձրությունը- 45մ,
- Պարկային ֆիլտրի մակերեսը - 90մ²

Օքսիդացման գործընթացը տեղի է ունենում ջերմության անջատմամբ, լրացուցիչ ջերմությունը՝ տեխնոլոգիական գործընթացում ստացվում է էլեկտրատաքացուցիչների հաշվին և ոչ բնական գազով: Խտանյութի թրծումը կատարվում է հորիզոնական պտտվող խողովակային վառարանում: Վառարանի ամբողջական մեկ պտույտը տեղի է ունենում 3.5 րոպեյում: Խտանյութի տեղաշարժը վառարանում ընթանում է առանց արտաքին ճնշման, կամ գազային հոսքի կիրառման: Ոստի զարկային արտանետումներն այս տեխնոլոգիական գործընթացում բացակայում են: Խտանյութի թրծման ընթացքում առաջացող գազաօդային խառնուրդը, որի ջերմաստիճանը 300-350°C է, պարունակում է անօրգանական փոշի, ծծամբական և ծծմբային անհիդրիդներ, նվազագույն քանակությամբ ազոտի և ածխածնի օքսիդներ:

Համաձայն հաշվետվության խտանյութի թրծման գործընթացը, արտադրության հիմնական մասն է և այդ արտադրամասից է տեղի ունենում աղտոտող նյութերի գերակշիռ արտանետումը մթնոլորտ: Թրծման ժամանակ առաջանում է MoO₃, որի մեջ պարունակվում է 0.05 – 0.15 % մնացորդային ծծումբ: Անօրգանական փոշին կազմում է բեռնավորված հումքի 6-8%-ը և դուրս է գալիս վառարանից գազաօդային խառնուրդի հետ: Մոլիբդենի սուլֆիդն օքսիդացման ընթացքում վերածվում է MoO₃ –ի և ծծմբային անհիդրիդի:

Ըստ նախագծի վառարանից գազաօդային խառնուրդը տեխնոլոգիական շղթայի վերջում տեղադրված ծխաքարչի միջոցով տրվում է գազամաքրման և գազահովաքման համակարգ, որը բաղկացած է.

ա) նստեցման և սառաեցման խուցից, որտեղ գազաօդային խառնուրդի արագության կտրուկ անկման արդյունքում կատարվում է գազի հովաքում և փոշենստեցում՝ խցի հատակին: Փոշենստեցման արդյունավետությունը կազմում է 70%:

Խցից դուրս եկող գազաօդային խառնուրդի ջերմաստիճանը հասնում է 55-60°C և ուղղվում է դեպի թևքային գտիչ (ֆիլտր), որ արդյունավետությունը կազմում է 98-99%,

բ) այնուհետև փոշուց մաքրված գազաօդային խառնուրդը տրվում է ջրային սկրուբեր, որտեղ իրականացվում է SO₃ գազի կլանում ջրի օգնությամբ՝ ծծմբական թթվի թույլ լուծույթի առաջացմամբ, հետևյալ ռեակցիայով՝ $SO_3 + H_2O = H_2SO_4$:

Առաջացած ծծմբական թթվի թույլ լուծույթի կոնցենտրացիան 5-6% հասնելուց հետո մի մասը՝ ըստ տեխնոլոգիական պահանջի, տրվում է հիդրոմետալուրգիական արտադարամաս՝ մոլիբդենի խտանյութից հիմնականում պղնձի, չնչին մասով ցինկի և կապարի ավելորդ քանակները հեռացնելու նպատակով: Մնացած մասը հալեցվում է աղանձ



10-12% և հավաքվում է թթվակայուն հատուկ տարաներում՝ որպես ապրանքային թթու, հետագա օգտագործման կամ առաքման համար,

գ) երկրորդ սկրուբերում օգտագործվում է կրակաթի լուծույթ՝ ծծմբային անհիդրիդի 96% կլանումն ապահովելու նպատակով:

Առաջացած կալցումի հիդրոսուլֆիտի կոնցենտրացիան հասցվում է մինչև 40%՝ ելնելով ցեյյուդա կամ գիպս արտադրողների պահանջարկից: Պահանջարկի բացակայության դեպքում ավազանի մեջ տրվում է օքսիդիչ (օդի թթվածին), որը կալցիումի հիդրոսուլֆիտը օքսիդացնում է մինչև կալցումի սուլֆիտի և նստեցվում է ավազանի հատակին: Բնական չորացումից հետո՝ գազաօդային խարնուրդն ամբողջովին մաքրվում է պինդ մասնիկներից, համապատասխան լցոնիչների հետ խառնելուց հետո ստացվում է շինարարության համար պիտանի որակի գիպս:

Մաքրված գազաօդային խարնուրդն արտանետվում է մթնոլորտ 47մ բարձրությամբ և 800մմ տրամագծով աշտարակային ծխնելույզի միջոցով:

Վառարաններում ստացված տեխնիկական MoO_3 -ի մի մասը՝ մոտ 70%-ը, 2,0մմ չափսերով համապատասխանում է արտադրանքին ներկայացվող պահանջներին, իսկ մնացած 30%-ը համապատասխանեցնելու համար մանրացվում են գնդիկավոր աղացում: Ստացված արտադրանքը տեղափոխվում է ֆերոմոլիբդենի արտադրամաս:

Մոլիբդենի խտանյութի մաքրում կատարվում է հիդրոմետալուրգիական եղանակով: Ստացված 5-6%-ոց ծծմբական թթվի լուծույթն օգտագործվում է մոլիբդենի ոչ կոնդիցոն խտանյութից պղնձի և ալյ խառնուրդների ավելորդ քանակները հեռացնելու համար:

Խառնուրդի լուծվելուց հետո ստացված սուսպենզիան զտվում է վակում ֆիլտրի միջոցով: Ստացված նստվածքը՝ մոլիբդենի խտանյութը, ուղարկվում է թրծման արտադրամաս, խառնվելով չորացուցիչ տրվող խտանյութի հետ: Լուծույթին ավաելացվում է Na_2CO_3 , որի արդյունքում պղինձը նստեցվում է կարբոնատների ձևով, իսկ չեզոքացված լուծույթը մղվում է ջրային սկրուբեր լրանուցման՝ օգտագործվող թարմ ջրի պահանջը կրճատելու համար:

Պղնձի կարբոնատը, որը չնչին քանակությամբ կարող է պարունակել կապարի և ցինկի կարբոնատներ, հավաքվում է բաց տարողությունների մեջ և բնական չորացումից հետո վաճառվում է պղնձարջասպ արտադրող կազմակերպություններին:

Ֆերոհամաձուլվածքների ստացման վառարաններից գազաօդային խառնուրդը ջրային կլանիչներում խառնվելուց հետո արտանետվում են 32.0մ բարձրության և 0.8մ տրամագծով խողովակից: Ֆերոհամաձուլվածքների արտադրությունում առկա է 5 հանքահորային վառարաններ, որոնք աշխատում են հաջորդաբար: Հալման պրոցեսի ընթացքում առաջացած գազերի հեռացման նպատակով նախատեսված է գլխանոց: Առաջացած գազերը ուղղվում են փոշու մաքրման սարքավորում՝ թաց ցիկլոն, լվացման խուց: Որսված փոշին վերադարձվում է արտադրություն, որի արդյունավետությունը կազմում է 87-90%:

Ներկայումս ընկերությունում ֆերոմոլիբդենի արտադրամասի տեղադրված սարքավորումներն են՝

- Չորանոց /գազային վառարան/-2 հատ,
- Գնդիկավոր աղաց-1 հատ,
- Պահեստավորման բունկերներ- 4 հատ,
- Խառնիչներ – 2 հատ,
- Հալման վառարաններ – 5 հատ,
- Հովացման ավազան – 1 հատ,
- Այտավոր ջարդիչներ- 2 հատ,
- Ջրային սկրուբեր 1 հատ,
- Նստեցուցիչ – 1 հատ,



- Զրային ավազան -1 հատ,
- Օդամղիչներ – 2հատ:

Համաձայն հաշվետվության Ընկերությունում գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային արտանետումների աղբյուր են հանդիսանում.

- հիդրոմետալուրգիայի տեղամաս՝ փոշու արտանետման չկազմակերպված աղբյուր,
- խտանյութի թրծման արտադրամաս՝ չորացման վառարաններից գազի այրման արգասիքներ, բեռնելու և բեռնաթափման ընթացքում անօրգանական փոշու արտանետում,
- ֆերոմոլիբդենի պատրաստման արտադրամաս /հումքատեսակների գնդիկավոր աղացներ/՝ փոշու արտանետում, չորացում և հալեցում՝ բնական գազի այրման արգասիքների արտանետում, խառնիչների աշխատանքի ընթացք՝ փոշու արտանետում:

Համաձայն CH 245-71 նորմի ընկերության համար ընդունվել է 500մ սանիտարապաշտպանիչ գոտի, հաշվի առնելով մերձակայքում բնակելի տների հեռավորությունը՝ 2.6կմ:

Ընկերության տեխնոլոգիական պրոցեսներն ուղեկցվում են դեպի մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումներով: Ընկերությունում մթնոլորտային արտանետումների աղբյուր են հանդիսանում տեխնոլոգիական գործընթացների տարբեր հանգույցների սարքավորումները և գործընթացները: Արտանետման աղբյուրների պարամետրերը որոշվել են գործիքային չափումների և հաշվարկային եղանակով, համաձայն օգտագործվող հումքի և վառելանյութի տեսակի, քանակի և տեխնոլոգիական ընթացակարգերի:

Խտանյութի (4800 տ/տարի) չորացումը կատարվելու են բնական գազով տաքացվող 2 չորացուցիչում: Բնական գազի այրման արդյունքում առաջանալու են ածխածնի օքսիդի և ազոտի օքսիդների արտանետումներ: Առաջացող գազաօդային խառնուրդից արտանետվում են 2 հատ 11մ երկարությամբ և 0.4մ լայնությամբ ծխնելուզի միջոցով՝ որոնք միավորվում է որպես մեկ արտանետման աղբյուր, գազի ծախսը կազմում է՝ 100 մ³/ժամ, 748800 մ³/տարի:

Հումքի բեռնման և բեռնաթափման արդյունքում առաջանալու են անօրգանական փոշու արտանետումներ, որոնք արտանետվում են շինության տանիքում տեղադրված դեֆլեկտորներով՝ աէռացիոն օդանցք:

Խտանյութի թրծման ընթացքում առաջացող գազաօդային խառնուրդը պարունակում է անօրգանական փոշի և ծծմբային անհիդրիդ:

Թրծման ժամանակ, մոլիբդենի սուլֆիդը, օքսիդացման արդյունքում, վերածվում է մոլիբդենի եռօքսիդի և առաջանում է ծծմբային անհիդրիդի, որը դուրս է բերվում գազաօդային խառնուրդի միջոցով:

Վառարանից գազաօդային խառնուրդը մղվում է դեպի գազամաքրման հանգույց, որը բաղկացած է հետևյալ սարքավորումներից.

- նստեցման և հովացման խուց 70 % արդյունավետությամբ (փոշու կլանում);
- թևքային գոիչ 98 % արդյունավետությամբ (փոշու կլանում);
- ջրային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է շրջանառու ջրային հոսքով, ապահովելով ծծմբական անհիդրիդի կլանման 99 %, ծծմբային անհիդրիդի 1% և փոշու կլանման 50 % արդյունավետություն;
- հիմնային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է կրակաթի թույլ լուծույթով, ապահովելով ծծմբային անհիդրիդի կլանման 96%, իսկ ծծմբական անհիդրիդը գործնականում ամբողջությամբ, և փոշու արդյունավետություն:



Համաձայն հաշվետվության կրակաթի լուծույթ ստանալու նպատակով ընկերությունը մանրեցված կրաքարը թրծում է գազային վառարանում, թրծվելուց հետո ստացված կիրը տեղափոխվում է կրակաթի պատրաստման չան: Կրաքարի թրծումը կատարվում է հակահոսքի միջոցով, որտեղ կատարվում է խոնավության և ածխածնի օքսիդների հեռացում:

Կրաքարի տաքացման համար գազի այրման ընթացքում թրծման վառարանում առաջանում են տաք ծխագազեր և փոշի: Կրաքարի թրծման համար օգտագործվում է գազային թմբուկային պտտվող վառարան ԵՄ-5Մ տիպի, որտեղ վերամշակվում է ամսեկան 74 տ կրաքար: Այն աշխատում է օրեկան 8 ժամ աշխատանքային ռեժիմով, գազի այրման արգասիքներն արտանետվում են 11մ բարձրության և 0.5մ տրամագծով ծխատար խողովակից, գազի ծախսը կազմում է՝ 50 մ³/ժամ, 125000 մ³/տարի:

Հիդրոմետալուրգիական եղանակով մոլիբդենի խտանյություն անկա ուղեկցող մետաղները (Cu, Zn, Pb) կորզվում են ջրային լուծույթների միջոցով, օգտագործելով քիմիական ռեագենտներ: Տվյալ դեպքում ռեագենտներից ցնդող են ծծմբական թթվի գոլորշիները, որոնց քանակը հաշվարկվում է օգտագործվող թթվի քանակից, որը կազմում է 288 տ/տարի:

Լուծույթի տաքացման համար օգտագործվում է բնական գազ (50մ³/ժամ): Գոլորշիները և բնական գազի այրման արգասիքներն արտանետվում են 0.1մ տրամագծով 8մ բարձրության ծխատարով:

Սիլիկոթերմիկ եղանակով ֆերոհամաձուլվածքների՝ ֆերոմոլիբդենի, ֆերովոլֆրամի, ֆերովանադիումի արտադրության ժամանակ.

- հումքային նյութերի չորացման ժամանակ արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ 8մ բարձրությամբ և 0.24մ տրամագծով խողովակից, գազի ծախսը կազմում է՝ 40 մ³ / ժամ, 100000 մ³/տարի,
- հումքային նյութերի աղացման և խառնման գործողությունների արդյունքում առաջացող անօրգանական փոշի արտանետվում է տեղային օդաքարշ համակարգով ֆերոհամաձուլվածքների արտադրությունում ելանյութերը մանրացվում է աղացների վրա:

Ըստ մեթոդակարգի ջարդիչում 1 կգ հումքի մանրացման ընթացքում առաջանում է 0.1մ³ աղտոտված օդային զանգված, որում փոշու կոնցենտրացիան կազմում է 2գ/մ³, այստեղից՝ $2,160,000 \times 2 = 4.32$ տ/տարի:

Ջարդիչը տեղադրված է փակ շինության մեջ և համաձայն մեթոդակարգի փոշու արտանետումների 80-90 % նստում է շինության մեջ և արտանետվում՝ 0.864 տ/տարի:

Համաձայն նախագծի գործունեության տարածքում իրականացվում է հիմնական նյութերի տեղափոխում և պահեստավորում:

Չորացրած և գնված չոր նյութերը տեղափոխվում և պահեստավորվում են հերմետիկորեն փակ տարաների մեջ, որը թույլ չի տալիս խոնավության և այլ նյութերի ներթափանցումը:

Արտադրամաս մտնող ամբողջ հումքը պահվում է առանձին-առանձին՝ իրարից 2- 3մ հեռավորության վրա, իսկ աղացածները՝ բունկերների մեջ:

Պատրաստված խառնուրդի աղաց-բունկեր-խառնիչ-վառարան տեղափոխումը կատարվում է առանց հարվածների, ցնցումների, որպեսզի բացառվի մետաղյա տարաների հարվածը այլ մետաղյա իրերի:

Տարողությունները փոշիներից մաքրելու համար օգտագործվում են փայտե թափեր և ավելներ:

Համաձայն հաշվետվության վնասակար արտանետումների քանակական բաղադրությունների հաշվարկը կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն:



Արտանետումների ազդեցությունը մթնոլորտային օդում գնահատելու նպատակով կատարվել են «Էկոլոգ 4.60» ծրագրով ցրման հաշվարկներ, որոնց արդյունքները համեմատվել են գոյություն ունեցող սանիտարական թույլատրելի նորմերի հետ: Վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները որոշվել են ինչպես հաշվարկային հարթակի մակերեսով, այնպես էլ հանձնարարված հաշվարկային կետերում, որոնք գտնվում են սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծին և մոտակա բնակելի տարածքում:

Աղտոտվածության մակարդակն արտադրության գոտու եզրագծում կազմելու է $0,02 \div 0,5$ ՍԹԿ միավոր, սանիտարա-պաշտպանիչ գոտու եզրագծին կազմելու է $0,07 \div 0,53$ ՍԹԿ միավոր, իսկ մոտակա բնակելի գոտում՝ $0.0082 \div 0.12$ ՍԹԿ միավոր:

Համաձայն Ընկերության անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների արտանետման թույլտվության՝ ընդլայնման արդյունքում արտանետման չափաքանակները հետևյալն են՝

Աղտոտող նյութեր	Ձեռնարկության արտանետում	
	գ/վրկ	տ/տարի
1	2	3
Անօրգանական փոշի	0,35	4,48
Ածխածնի օքսիդ	0,86	14,23
Ազոտի օքսիդներ	0,15	2,5
Ծծմբային անհիդրիդ	3,87	111,58
Կրափոշի	0,019	0,2
Ծծմբական թթվի գոլորշիներ	0,1	2,9

Համաձայն հաշվետվության մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքներով մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում:

Գործունեության իրականացման հետևանքով՝ մթնոլորտի վրա հնարավոր ազդեցության տնտեսական վնասը կազմելու է 8301,8 դրամ/տարի:

Ընկերությունում ադմինիստրատիվ շենքի ջեռուցումն ապահովվում է կաթսայատան միջոցով՝ բնական գազի օգնությամբ: Կաթսայատանը տեղադրված են 3 հատ գազային ջեռուցման կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32,0կՎ հզորությամբ: Արտանետումների բոլոր աղբյուրները հաստատուն են և արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ:

Համաձայն հաշվետվության ընկերությունում ջուրն օգտագործվում է արտադրական, օժանդակ ինչպես նաև խմելու-տնտեսական նպատակներով: Ներկայիս թարմ խմելու որակի ջրի տարեկան ընդհանուր ծախսը կազմում է 6711,2մ³: Ձեռնարկությունում տեխնոլոգիական նպատակով կիրառվում է ջրամատակարարման շրջանառու համակարգ:

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված ելակետային տվյալների՝ գործունեության ընդլայնումից հետո, կապված տեխնոլոգիական պրոցեսից, աշխատանքային ռեժիմից, աշխատանքային օրերի քանակից, ինչպես նաև գործունեությամբ զբաղված աշխատողների թվաքանակից ելնելով /54 աշխատակից/, նախատեսվող թարմ խմելու որակի ջրի տարեկան ընդհանուր ծախսը ընդլայնումից հետո կկազմի 8769.2մ³:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և տեղանքի ջրային ռեսուրսները հնարավոր աղտոտումից զերծ պահելու համար գործունեության արդյունքում նախատեսված են և իրականացվում են հետևյալ միջոցառումները, որոնք կշարունակեն գործել նաև ընդլայնումից հետո.

- ջրային սկրուբերում ծծմբական անհիդրիդի կլանումն իրականացնելու և շրջանառու համակարգի օգնությամբ,



- հիմնական սկրուբերում ծծմբային անհիդրիդի կլանումը՝ հիմնային լուծույթի փակ շրջանառու համակարգով,
- հիդրոմետալուրգիայի վակում գտիչի ջրային գտվածքի ուղղում դեպի ջրային սկրուբերի ավազան՝ կրկնակի օգտագործման նպատակով,
- գիպսի ստացման ժամանակ առաջացած լուծույթի ուղղում դեպի հիմնային սկրուբերի ավազաններ:

Ընկերությունն արտադրական գործընթացներում օգտագործում է ջրի փակ շրջանառու համակարգ, ինչի արդյունքում արտադրական արտահոսքեր չեն առաջանալու, հովացման ջրօգտագործումը համարվում է անվերադարձ:

Համաձայն հաշվետվության Ընկերությունն անձնագրավորել է թվով 10 թափոններ, որոնք հաստատվել են շրջակա միջավայրի նախարարության կողմից: Թափոններից 6-ը պատկանում են վտանգավորության 4-րդ դասի, իսկ 4-ը՝ վտանգավորության 3-րդ դասի:

Գործունեության ընթացքում առաջանալու են արտադրական և կենցաղային թափոններ:

Ընկերության գործունեության արդյունքում առաջացող արտադրական թափոնների քանակն /ներկա իրավիճակում և հեռանկարային տ/տարի/ ըստ հաշվետվության կազմում է. յուղոտված լաթեր՝ 0.350/0.400, կազմակերպության կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)՝ 11/15, բանեցված կոմպրեսորային յուղեր՝ 1.5/1.5, գտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ՝ 5/10, գտման գործվածքներ, պարկեր, առանց վնասակար խառնուրդների՝ 1.5/3.0, չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի)՝ 10.0/10.0, ֆերոհամահալվածքների խարամ՝ 2500/2500, գիպսային շլամ՝ վնասակար խառնուկներով՝ 2500/5000, պղնձի շլամ՝ 13/18.0:


Ըստ հաշվետվության գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Գործունեության տարածքից թափոնները հեռացվում կամ տրվում են վնասագերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվում են Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:

Գործունեությունն իրականացվելու է Ընկերության սեփականություն հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, իսկ գործունեությունն իրականացվում է մարդկային ակտիվ ազդեցություն ունեցող գոտում, ուստի անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում:

Համաձայն գնահատման հաշվետվության գործունեության իրականացման ընթացքում լինելու են ազդեցություններ՝ կապված տրանսպորտի տեղաշարժի, թափոնների տեղափոխման, վառարանների շահագործման ընթացքում մթնոլորտ ծխաբերանի ազդու, ածխածնի, ծծմբի օքսիդների, պինդ մասնիկների արտանետման, աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ռիսկերի առաջացման հետ:




Գնահատման հաշվետվությունում նախատեսվել է օդային ավազանն աղտոտումից պահպանման, թափոնների կառավարման, սոցիալական, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ (մշտադիտարկում)։

- չոր եղանակներին ջրվելու է արտադրական հրապարակները և ներքին ճանապարհները,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործվելու են սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվելու են պլանային տեխնիկական ստուգումների,
- մետաղի պահեստավորումն իրականացվելու է հատուկ հատկացված պահեստային տարածքներում,
- հումքը տեղափոխվելու է ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով,
- պարբերաբար ստուգվելու է գազափոշեմաքրման համակարգի աշխատանքը,
- հնարավորության դեպքում կատարվելու է թափոններից կրկնակի օգտագործում,
- վառարանները սպասարկող անձնակազմի համար ապահովվելու է բոլոր անհրաժեշտ անհատական պաշտպանության միջոցները,
- արտադրամասն ապահովվելու է առաջնային հրդեհաշիջման միջոցներով և այլ հակահրդեհային հանդերձանքով,
- պարբերաբար ստուգվելու է ավտոտրանսպորտային միջոցների շարժիչների աշխատանքը և անհրաժեշտության դեպքում կարգաբերվելու են դրանք,
- արտադրական թափոնները հավաքվելու և պահեստավորվելու են միայն դրանց համար հատկացված վայրերում,
- պարբերաբար իրականացվելու են սարքավորման հսկման, դրանց հերմետիկության ստուգումներ՝ բացառելով վերջինիս անսարք վիճակում աշխատելը,
- կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում և այլն։

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի իրականացման համար նախատեսվող ծախսերը կազմելու են 470000 դրամ։

Պատճառաբանական մաս. Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման հաշվետվության փորձաքննության գործընթացն իրականացվել է Օրենքի պահանջներին համապատասխան։

Հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են համապատասխան մասնագիտական կառույցները՝ առողջապահության նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները։ Փորձաքննության գործընթացում հրավիրվել է փորձագետ, ում կողմից ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ։ Հաշվետվությունն առաջարկություններով և դիտողություններով մի քանի անգամ լրամշակվել է, հաշվի առելով նաև հրավիրված փորձագետի կողմից ներկայացված որոշ դիտողություններ։ Օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննության բոլոր փուլերում Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել։ Վերջին հանրային քննարկման ընթացքում բարձրացվել են հարցեր կապված գործունեության արդյունքում մթնոլորտային օդ վնասակար արտանետումների, զարկային արտանետումների, մարդու առողջության վրա վնասակար ազդեցությունների հետ, ինչի վերաբերյալ ընտանեկան կողմից հաշվետվությունում կատարվել են լրացումներ և ներկայացվել են պարզաբանումներ։



Նախատեսվող գործունեության համար գործող նորմերով ապահովված է սանիտարապաշտպան գոտու պահանջվող չափը: Հաշվետվությունում ներկայացված միջոցառումների, մշտադիտարկումների իրականացման արդյունքում, վերահսկելի և կառավարելի կլինեն օդային ավազանն աղտոտող վնասակար նյութերի քանակները և աղտոտվածությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել հաշվետվությամբ նախատեսված մշտադիտարկման (մոնիթորինգ) և բնապահպանական միջոցառումների կատարումը, կազմել հետնախագծային վերլուծության ծրագիրը, ինչը համապատասխան պահանջի դեպքում պետք է տրամադրվի պետական մարմիններին և հանրությանը:
- Հաշվետվությունում նախատեսված բնապահպանական միջոցառումների չբավարարման դեպքում, նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական բոլոր նորմերը:
- Պահպանել հաշվետվությամբ ամրագրված տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները, ցուցանիշները և նորմերը:
- Քանի որ գործունեության արդյունքում առաջացող արտադրական թափոնները նախատեսված է հեռացնել աղբավայր, անհրաժեշտ է թափոնների տեղադրումն իրականացնել շրջակա միջավայրի նախարարության կողմից հաստատված թափոնի անձնագրերի համաձայն:
- Արտադրական տարածքում և գործարանին մոտ բնակելի տարածքների ուղղությամբ անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկումների իրականացում, դրանց կատարման ժամկետները, մթնոլորտային օդում պինդ մասնիկների, ազոտի երկօքսիդի, ածխածնի օքսիդի կոնցենտրացիաները վերահսկելու նպատակով:
- Պարբերաբար ստուգել օդաքառք համակարգերի և փոշեռսիչ պարկերի մաքրման արդյունավետությունը և տեխնիկական վիճակները, անհրաժեշտության դեպքում իրականացնել սարքավորումների կարգաբերում կամ փոխարինում նորով:
- Բացառել բաց տարածքում թափոնների կուտակումը և պահպանումը:
- Պահպանել բնապահպանական, աշխատանքի անվտանգության նորմերը, ելնելով ՀՀ աշխատանքային օրենսգրքով (հոդված՝ 243, 244) ամրագրված՝ մարդու առողջության և անվտանգության պահանջից:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Ալափմետ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Չարենցավան համայնքի Ալափարս բնակավայրում գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի Գլխ. մասնագետ՝



Արմինե Վարդանյան